



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

«19» սեպտեմբեր 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 441-շհ

«ՉԱՐԼԻ ԷՅՐԼԱՅՆԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ («ՍԱՅՓՐՈՒՍ ԷՅՐՎԵՅՍ») ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանը և հիմք ընդունելով «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերության («Սայփրուս Էյրվեյս») 2023 թվականի սեպտեմբերի 11-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. «Չարլի Էյրլայնս» ՍՊ ընկերությանը («Սայփրուս Էյրվեյս») (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ երթուղով՝ 2023 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում Լաոնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լաոնակա/LCLK/ երթուղով իրականացվող չվերթների շարունակությունը (ԻԱՏԱ) 2023-2024 թվականի ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում՝ 2023 թվականի հոկտեմբերի 31-ից մինչև 2024 թվականի մարտի 28-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմանների, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 23-ի N 413-Ա հրամանի 2-րդ կետով նախատեսված արտոնությունը:

3. Օդային տրանսպորտի միջազգային ասոցիացիայի (ԻԱՏԱ) ամառային ժամանակահատվածի մասով արտոնության վերաբերյալ դրույթները կսահմանվեն առանձին հրամանով՝ Ընկերության կողմից ներկայացվող հայտի հիման վրա:

4. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

5. Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի կայքում:

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

9/19/2023

X 

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ

Signed by: PAYASLYAN STEPAN 1109810601

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 109/2023
ՕՏԱՐԵՐԿՐԻՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԳՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 109/2023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

| | |
|---|--|
| Օդանավ շահագործողը Aircraft Operator | «Չարլի Էյրլայնս» ՍՊԸ («Սայփրոս Էյրվեյս») «Charlie Airlines» LTD (“Cyprus Airways”) |
| Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s) | A320 |
| Հաճախականությունը Frequency | շաբաթական 2 չվերթ 2 flights per week |
| Երթուղին Air route | Լառնակա/LCLK/-Երևան/UDYZ/-Լառնակա/LCLK/ Larnaca/LCLK/-Yerevan/UDYZ/-Larnaca/LCLK/ |
| Թույլտվության գործողության ժամկետը Permission validity | 31/10/2023 մինչև 28/03/2024 31/10/2023 till 28/03/2024 |

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԱՎԻԱՅԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ
ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ
ACTING CHAIR OF THE
CIVIL AVIATION COMMITTEE
STEPAN PAYASLYAN

9/19/2023

X 

ՍՏԵՓԱՆ ՓԱՅԱՍԼՅԱՆ

Signed by: PAYASLYAN STEPAN 1109810601



19.09.2023
(տալու ամսաթիվը)
(date of issue)